ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունիսի 2024 թվականի N 898 - Լ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-ին և 4-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի N 710-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ծրագրի իրականացման լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությանը:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում հաստատել ծրագրի իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության և առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների միջև համագործակցության պայմանագրի ու որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված հավաստագրի (այսուհետ՝ հավաստագիր) օրինակելի ձևերը.

2) մինչև 2024 թվականի օգոստոսի 1-ը Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել որոշման N 1 հավելվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված գործող հիփոթեքային վարկի մարման աջակցության տրամադրման ընթացակարգը.

3) մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել հավաստագրի իրացման արդյունքում առաջացած դրական մնացորդի իրացման ընթացակարգը.

4) մինչև 2025 թվականի մայիսի 1-ը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության հետ համագործակցելով ապահովել որոշման N 1 հավելվածի 14-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջի ստուգման համար անհրաժեշտ տեղեկատվության ստացումը տեղեկատվական համակարգերի փոխգործելիության միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ